հիւսիսային սահմանների վերջնական որոշումը։ Եւ մեր անդաւաճան բանակը այդ կանի (ծափեր) և անհրաժեշտ է, որ յաջող կերպով հասցի մինչև աշնան վերջը։ Մենք ունենք հերթական խնդիրներ՝ ելք դէպի ծով և տաճկապատկան մեր նահանգների դրաւումը, եթէ միայն հիւսիսից և արևելքից ոչ մի վտանգ չսպառնայ (ծափեր)։

Ա. Խոնդկարեան (սոց.-յեղ.). — Ստեղծուած աննորմալ պայմանները մեր քաղաքական կեանքի առաջացրին նոյնպէս աննորմալ պայմաններ մեր խորհրդարանային կեանքի մէջ։ Այս երկրորդ անգամն է, որ Հայաստանի խորհրդարանը բացւում է, բայց դուք կրկին տեսնում էք, որ օրակարգի 2-րդ խնդիրը նորից դաղարի հարցն է։ Այս ամբողջ նիստը գրեթէ նուիրուեց մեր քաղաքական կեանքի կազմաւորման խնդրին և դա ունի իր պարզ բացատրութիւնը։ Քաղաքական կեանքը, ինչպէս իւրաքանչիւր ծնունդ, ծնւում է երկունքով ու ցաւով։ Բոլոր քաղաքական կեանքերի ղեկավարների պարտքն է թեթևացնել այդ երկունքը։ Երկու տարի է, որ մեր քաղաքական կուսակցութիւնները ջանք են թափում ստեղծել այդ քաղաքական կեանքը։ Երբ հայ քաղաքական կեանքի կենտրոնը հաստատուեց Երևանում, հայ սոց.-յեղ. ֆրակցիան եկաւ այստեղ և կատարեց իր աշխատանքը։ Երկու տարի է, որ օրգանական և փաստական աշխատանք են կատարել այստեղ՝ ելակէտ ունենալով հայ աշխատաւորութեան շահերը։ Ի թիւս այդ աշխատանքների, մենք յայտնած ենք մեր տեսակէտները Հայաստանի վերաբերմամբ։ Ձեզ շատ լաւ յայտնի է, թէ ինչպէս ստեղծուեց այդ քաղաքական կեանքը. կար մի անորոշութիւն մեր ապագայի նկատմամբ, որ մեր մամուլը արտայայտել է բաւական լաւ կերպով (Վ. Նաւասարդեան՝ տեղից. «շատ խայտառակ կերպով»)։

Մեր պատգամաւորութիւնը Եւրոպայում մինչև խօսում է եւրոպական պետութիւնների մանդատի մասին. իսկ այսօր քաղաքական պայմաններն այնպէս են դասաւորուած, որ ժամանակ է յայտարարել, թէ մեր պետութիւնը պիտի ապրի ինքն իր ուժով։ Այսօր, սակայն, ռուսական օրիենտացիան նոյնպէս գործնական օգուտ չէ տալիս մեր պետութեանը՝ թէ Անդրկովկասում ստեղծուած դրութեամբ և թէ իր ներկայ իդէոլոգիայով։ Եւ ես պարտք ունեմ յայտնելու այստեղ սոց.-յեղ. ֆրակցիայի կողմից, որ մենք եկած ենք այն համոզմանը, որ Անդրկովկասի դեմոկրատիան պիտի ապրի ինքն իրեն անկախ (բուռն ծափեր, բացականչութիւններ. «վերջապէ՞ս»)։ Իւրաքանչիւր ոյժ, որ դէմ կը գնայ այդ շահերին, կը դիտուի նոյնպէս թշնամի, և մենք դէմ պիտի գնանք նրան (ծափեր)։ Բայց ոչ ամէն ոք, որ ասում է Միացեալ և Անկախ Հայաստան, կարող է մասնակցել մեր քաղաքական կեանքին։ Մի քանի ամիս առաջ մենք յայտնեցինք, որ մեր կուսակցութիւնը չէ թէ ընդդիմադիր է հայ քաղաքական կեանքին, այլ հայ քաղաքական կեանքի։ Ես, իբր վերահասու մեր ճգնաժամի օրերին, նոյնն եմ հաստատում այժմ։ Ճիշտ է, փորձեր են եղել և նոյնիսկ բանտարկել են մեր ընկերներին, բայց մեր վերաբերմունքը նոյնն է մնացել, այսինքն՝ հայ ժողովրդի շահերը։

Արտաքին և ներքին քաղաքական կեանքի մասին մեր ֆրակցիայի տեսակէտը պարզ է եղել։ Թիֆլիսի ազդ.-կոնֆերանսի մէջ որոշում կայացուեց Հայաստանի ամբողջացման մասին, որին համաձայնեցինք և մենք։ Նոյնն ենք ասում նաև հիմա։

Երկրորդ խնդիրը ազգայնացման խնդիրն է։ Հայաստանը պէտք է լինի հայաստանցիների համար։ Ցեղագրական պայմանները ցոյց են տալիս, որ Հայաստանում պիտի լինեն նոյնպէս այլազգիներ։ Թշնամի տարրերն, ան-